

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

(COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS

2016

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի և
Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ*

Հանդեսը լույս է տեսնում Հրազդան քաղաքի քաղաքապետ
Արամ Դանիելյանի հովանավորությամբ

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արամ Սիմոնյան - Նախագահ (ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Պետրոս Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Սարգսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Իգիթ Դարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտոր), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտոր), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Հակոբ Պետրոսյան** (բանասիր. գիտ. թեկն.):

Главный редактор: докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Արամ Սիմոնյան (председатель, ректор ЕГУ, членкор. АН Республики Армения, докт. ист. н., проф.), **Աշոտ Մելքոնյան** (академик АН Республики Армения, докт. ист. н., проф.), **Պետրոս Օганեսյան** (канд. ист. н., проф.), **Ալբерт Степанян** (докт. ист. н., проф.), **Այկ Աветисян** (докт. ист. н., проф.), **Աйрапет Маргарян** (докт. ист. н., проф.), **Լևոն Չугасзян** (докт. Искусствовед. н. проф.), **Игит Гарибян** (докт. ист. н., проф.), **Генрих Абраамян** (докт. ист. н., проф.), **Айказ Оганесян** (докт. ист. н., проф.), **Гамлет Петросян** (докт. ист. н., проф.), **Աշոտ Нерсесян** (докт. ист. н., проф.), **Արман Егизарян** (докт. ист. наук), **Արтак Мовсисян** (докт. ист. наук), **Օвик Григорян** (канд. ист. н., доц.), **Մխիթար Գабриелян** (канд. ист. н., доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. н., доц.), **Ակոպ Петросян** (канд. филолог. наук).

Editor-in-Chief- Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Aram Simonyan (Chairman, Rector of YSU, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Petros Hovhannisyanyan** (PhD in History, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Artak Movsisyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor), **Hakob Petrosyan** (PhD in Philology).

ISSN 1829-2771

Միքայել Մալխասյան

ՕՏԱՐ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Բանալի բառեր - Սեֆյան Պարսկաստան, Օսմանյան կայսրություն, թյուրքալեզու ցեղեր, քրդական ցեղեր:

16-րդ դարում Հայաստանի բնակչության էթնոկրոնական կազմը սկսեց որոշ փոփոխություններ կրել, ինչը, սակայն, չկարողացավ փոխել նրա հայեցի նկարագիրը¹: Սեֆյան Պարսկաստանը խրախուսում էր շիա դավանանքի թյուրքական և քրդական քոչվոր մի քանի ցեղերի հաստատվելը Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում՝ փորձելով էթնիկական հենարան ստեղծել սուլնի Օսմանյան կայսրության դեմ մղվող պայքարում²: Ներթափանցումների ծավալները պատկերացնելու համար հարկավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նույն հողը մի ցեղապետից որոշ ժամանակ անց անցնում էր մեկ այլ ցեղապետի ձեռքը, ինչը նշանակում է, որ ցեղապետերի տրամադրության տակ եղած մարդկանց թվաքանակը չէր կարող շատ մեծ լինել: Այսպես, 16-րդ դարի 1-ին տասնամյակում Արարատյան կուսակալությունում շարունակել են իշխել արդեն Սեֆյաններին հարած Սաադու ցեղի ամիրաները³: 1515 թ. Օսմանյան կայսրության հետ կնքած հաշտությանից հետո շահ Իսմայիլը կուսակալությունը խոշոր ավատի իրավունքով տվել է ղզլբաշական Ռումլու մեծ ցեղի ամիրաներին, ինչի մասին են վկայում Հասան-բեկ Ռումլուի տեղեկությունները⁴: 16-րդ դարի 1-ին կեսին Կարսը, Չարիշատը, Մաղասբերդը, Բայազետը, Մակուն և Կաղզվանը որպես օլթա (ավատ) Սեֆյանների կողմից փոփոխաբար տրվել են Սաադու, Չմշկածագլու, Բայաթ, Դունբուլի և այլ ղզլբաշ ու քուրդ ցեղերի⁵: Իսթանդար Մունշին 1552 թ. դեպի Երզրում կատարվող պարսկական արշավանքի մասնակիցների թվում հիշատակում է Արարատյան կուսակալությունում իշխող Շահկուլի սուլթան Ութաջլուին, որը, փաստորեն, նշանակվել էր կուսակալությունում 1549 թ. Հունեյն-ջան սուլթան Ռումլուի՝ Երզրումի Իսթանդար փաշայից պարտություն կրելուց հետո⁶: Փաստորեն, իշխանությունը Արարատյան կուսակալությունում մի ցեղից անցել էր ղզլբաշական մեկ այլ ցեղի: Հասան-բեկ Ռումլուի, Իսթանդար Մունշիի և թուրք հեղի-

¹ Հայոց պատմություն, հ. II, գ. II, Երևան, 2014, էջ 625:

² Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949, с. 89-91.

³ Տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. II, Կալվածագրեր, պ. I (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1968, վավ. 21, 23, 25, 27:

⁴ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), ԼՂԳ, 1973, թ. 6, էջ 26, 28:

⁵ Նույն տեղում, էջ 28:

⁶ Նույն տեղում:

նակ Սելանիկիի տեղեկությունների զուգադրմամբ ստացվում է, որ Նորանշանակ «սուլթանին» ավելի քան երկու տասնամյակ անց հաջորդել է որդին՝ Մուհամմադի խան Թոխմախը¹: Իսբանդար Մուևշին Թահմասպ Ա-ի գահակալության երկրորդ շրջանում տիրույթներ ունեցող 114 ամիրաների թվում ներկայացնում է նաև Արարատյան կուսակալությունում օլթաներ ունեցող տարբեր ցեղերի ամիրաների, օրինակ՝ Մուհամմադի խան Թոխմախիի օրոք Շորագյալի և ապա Ալաշկերտի հաքիմն եր Կարախան Բայբուրդյուն, օլթաներ ունեին նաև քուրդ Փագուկիները²: Այս գործընթացների կողքին, այդուհանդերձ, ամենազանգվածային տեղաշարժերը տեղի ունեցան Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան և հարավային հատվածներում, որոնք պայմանավորված էին քրդական ցեղերի հետ: Ն. Ադոնցը Հայկական հարցի շուրջ իր հոդվածներում («Թուրքիայի անդամահատումը», «Քրդերի ներթափանցումը Հայաստան», «Առաջավոր Ասիայի հիմնահարցի լուծման շուրջ» և այլն) նշում է, որ քրդական հետքը մինչ ուշ միջնադար Հայկական լեռնաշխարհում դեռևս զգալի չի եղել³: Վ. Բայբուրդյանը հետևում է Ն. Ադոնցի այն տեսակետին, որ բացառությամբ Վանի և Բաղեշի (Բիթլիսի) իշխող տների, մնացյալ քրդական տիրույթները Եփրատի և Տիգրիսի հովտում առաջացել են թուրք-պարսկական պատերազմների սկզբնական շրջանում՝ 16-րդ դարի սկզբին⁴: Այդուհանդերձ, հայ-քրդական առաջին առնչությունները վկայված են դրանից մի քանի հարյուրամյակ առաջ⁵: Քրդերը Մրվանյան հարստության ժամանակվանից սկսած (10-11-րդ դարեր)՝ Միջագետքից շարժվել են հյուսիս և 14-րդ դարում քրդական ցեղապետների մի մասը, մոնղոլների մոտ ծառայության անցնելով, Վանա լճի և Արևելյան Եփրատի ավազաններում հողային տիրույթներ է ստացել: 16-րդ դարի կեսերին պորտուգալացի ճանապարհորդ Մ. Աֆոնսոն Հագոյում (Հարավային Սասունում) 500-600 բնակիչների մեջ մեծամասնություն կազմող հայ քրիստոնյաների կողքին հիշատակում է նաև մահմեդական քրդերին⁶:

Հայաստանի հարավարևմտյան գավառներում քրդական տարրի հաստատման ուսումնասիրման համար կարևոր են ոչ միայն հայկական, այլև արաբական սկզբնաղբյուրները, որոնց համադրմամբ պարզվում է, որ արդեն 14-րդ դարում ձևա-

¹ Նույն տեղում, էջ 29-30: Ի դեպ, Թոխմախ խանի իշխանության շրջանն անցել է հարաբերական խաղաղության պայմաններում, և հենց նրա օրոք է կառուցվել ոռոգման զգալի հնարավորություններ տվող Թոխմախի լճակը Երևանի տարածքում:

² Նույն տեղում, էջ 30:

³ Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հ. 2, Երևան, 2012, էջ 222-223:

⁴ Տե՛ս Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը 16-րդ դ., ՊԲՀ, 2006, թ. 3, էջ 69:

⁵ Տե՛ս Դալայյան Տ., Հայ իշխանական տների հետքերը Հարավարևմտյան Հայաստանում (քրդական որոշ ցեղանունների և ցեղերի ծագման հարցի շուրջ), ՊԲՀ, 2004, թ. 2, էջ 174-196: Քրդական վաղ տեղաշարժերի մասին տե՛ս Փոլադյան Ա., Քրդերը և ռազմաքաղաքական անցքերը Ատրպատականում X դարի առաջին կեսին (ըստ արաբական աղբյուրների), ՊԲՀ, 1984, թ. 2, էջ 87-92:

⁶ Հարությունյան Ս., Բարթիկյան Հ., «Սասնա ծռերի» արձագանքները «Շարաֆ-Նամեում», ՊԲՀ, 1975, թ. 2, էջ 97-99: Շարաֆ-խանը Սասունի քրդական ցեղամիավորման իշխաններին կոչում է «Հագո» և սերած համարում երկու եղբայրներից, որոնք անջատվել են ռոմլի ցեղից (տե՛ս Դալայյան Տ., Հայ իշխանական տների հետքերը Հարավարևմտյան Հայաստանում, էջ 195): Այս պատմությունը, ինչպես նկատել են Ս. Հարությունյանը և Հ. Բարթիկյանը, կրում է Սասնա ծռերի կնիքը: Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Հագո բերդին տիրացել է Բիթլիսի Արդալ խանի նախնիներից մեկը Լենկ-Թեմուրի արշավանքների ժամանակաշրջանում, այնուհետև 1514 թ. այն շնորհվել է Բիթլիսի խանին՝ Դիարբեքիի Եյալեթի հյուբյունեթի կարգավիճակով (Թուրքական աղբյուրներ. Էվլիյա Չելեբի, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, հ. 9, Երևան, 1967, էջ 194): Ի դեպ, խլարթն էլ «Սասնա ծռեր»-ի քրդական պատումներում հիշվում է որպես Հայաստանի մայրաքաղաք, ուստի քրդական ընկալման մեջ խոր արմատներ է գցել Շահ-Արմենների պետության անվանումը. չէ՞ որ այդ պետության կենտրոնը խլարթն էր:

վորվել են Բաղեշի (Ռոժակ ցեղի), Վան-Ոստանի (Շամոյան կամ Չաքքարի ցեղի), ինչպես նաև ավելի փոքր՝ Խիզանի, Չազոյի, Ջերմուկի, Սպարկերտի, Բալուխի և այլ իշխանությունները: Ըստ «Շարաֆ-Նամե»-ի՝ Բաղեշի բուրդ ամիրաներն արդեն 14-րդ դարի կեսերից ժառանգաբար էին իշխում¹: Այս ամիրայության առնչությամբ Առաքել Դավրիժեցին, մեջբերելով Արճեշում գրված մի հիշատակարան, պատմում է Աղթամարի Չաքարիա Գ կաթողիկոսի (1434-1464) միջամտությամբ Բաղեշի ամիրայի կողմից Բաղեշի, Մուշի, Խուլթի, Սասունի և Նրանց գավառների բնակչությանը հալածանքներից ազատելու մասին: Նա, կայսերական հարկ վճարելով, «ազատեաց զամենայն խառնիճաղանճ ժողովուրդն զՌայ և զՏաճիկ ի ձեռաց անօրինաց և ի դառն գերութենե»²: Հետագա շարադրանքում նույն ամիրայի մասին խոսելիս նա նշում է «ի Քուրդ ամիրայեն» արտահայտությունը³, իսկ առափնյա Ոստան քաղաքում իշխանը «եր ազգաւ Քուրդ»⁴: Փաստորեն, 14-15-րդ դարերում նկատվել է քրդերի տեղաշարժ Տավրոսով դեպի հյուսիս՝ Հարավարևմտյան Հայաստան⁵: Տոհմաբան Ե. Ցամբաուրը, պատմաբան Մ. Չաքին և ուրիշներ, առաջնորդվելով Շարաֆ-խանի կիսավիպագրական տվյալներով, առաջ են քաշել այն տեսակետը, որ Վանը, Ոստանը, Ջուլամերիկը և Չաքքարին ընդգրկող քրդական իշխանությունը հիմնադրվել է 1480-1490-ական թթ.⁶: Հիմնվելով 15-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում տրված տվյալների վրա՝ Լ. Խաչիկյանը պարզել է, որ քրդական ամիրայության հիմնադիրը հայկական սկզբնաղբյուրներից մեզ հայտնի ամիր Եզդին-Շերն է, ով իշխել է 1380-ական թթ.⁷: Ա. Խաչատրյանը 14-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններից, Թովմա Մեծփեցու և արաբական վիմագիր տվյալներից դուրս է բերել Հարավային Հայաստանում քրդերի մասին հաճախակի դարձող տեղեկությունները: Կանգ չառնելով մանրամասների վրա և նպատակ չունենալով մանրամասնել 14-րդ դարի անցքերը՝ այժմ ներկայացնենք Ա. Խաչատրյանի կողմից առանձնացված դեպքերի միայն վայրը և թիվը՝ Ոստան (1318, 1335, 1377, 1384, 1386, 1392, 1395 թթ.), Խլաթ (1328, 1396 թթ.), Երզնկա (1338 թ.), Աղբակ (1351 թ.), Վան (1387 թ.), Դիզի ձոր (Փոքր Աղբակ, 1398 թ.), Ջուլամերիկ (1398 թ.)⁸: Հաջորդ դարի առաջին քառորդին Բաղեշում արդեն հիշվում է ռոժակի ցեղի ամիրայությունը, իսկ Արծկեն արդեն ընդգրկվել էր Ոստանի ամիրայության մեջ⁹: Ըստ Ա. Խաչատրյանի՝ Չաքքարիի ամիրայությունը՝ Ոստան կենտրոնով, գոյություն է ունեցել 1335-1424/1425 թթ., վերականգնվել է 15-րդ դարի վերջին, իսկ 16-17-րդ դարերում տրոհվել է Ջուլամերիկի,

¹ Տե՛ս Փափագյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.), «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների», 1960, թ. 7-8, էջ 35:

² Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ (այսուհետ՝ Առաքել Դավրիժեցի), Վաղարշապատ, 1896, գլ. Լ, էջ 420-422:

³ Նույն տեղում, էջ 423:

⁴ Նույն տեղում, էջ 425:

⁵ Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը, էջ 67-84: Քրդական տեղաշարժերի մասին տե՛ս նաև Փափագյան Հ., Քուրդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», թ. 8, Երևան, 1967, էջ 229-248:

⁶ Խաչատրյան Ա., Չաքքարի քրդական իշխանության կազմավորման հարցի շուրջ (ԺՂ դար), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 13, Երևան, 1985, էջ 134-135:

⁷ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 36, 58: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյանը, մ. Բ, 1958, I-VII:

⁸ Տե՛ս Խաչատրյան Ա., Չաքքարի քրդական իշխանության կազմավորման հարցի շուրջ, էջ 136-141:

⁹ Նույն տեղում, էջ 142-145:

Ոստանի, հոշաբի և Բերկրիի իշխանությունների¹: Եվլիա Չելեբին, 17-րդ դարի կեսերին հյուրընկալվելով Բիթլիսում իշխող քրդական ռոժակի (ռուժակի, մուզակի) ցեղի պետ Աբդալ խանի մոտ, նշում է, որ նրանք «հին քրդերից են»², ինչն ինքնին խոսում է այն մասին, որ քրդերը մի քանի փուլով են հաստատվել Արևմտյան Հայաստանում: Ուսումնասիրելով ցեղապետից ուղեգրի գրի առած բանաստեղծությունը՝ հոլանդացի գիտնական Մարտին վան Բրոյնստենը եզրակացրել է, որ ռոժակի ցեղն ունի հայկական ծագում³:

Քրդական ներթափանցումների փուլերը դիտարկելիս կարևոր է հասկանալ՝ ինչպես է ընկալվել այս եթևոսը ժամանակի հայ էթնոքաղաքական մտածողության կողմից: Այս առնչությամբ Հ. Մարգարյանը իրավացիորեն նկատել է, որ ուշ միջնադարյան հայ հեղինակների, օրինակ՝ Առաքել Դավրիժեցու և Չաքարիա Քանաքեռցու գործերում զանգվածաբար գործածվող «մար» և «բուրդ» էթնոնիմները հանդես են գալիս որպես հոմանիշներ, ինչպես և կարծում է Վ. Մինորսկին, մինչդեռ մինչև Մատթեոս Ուռհայեցին և Դավիթ Ալավկաորդին հայ հեղինակներին անծանոթ է եղել «բուրդ» անվանումը, իսկ 13-րդ դարի հեղինակներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին մինչև 12-րդ դարի դեպքերին անդրադառնալիս օգտագործել են «մար», այնուհետև 12-րդ դարից սկսած՝ «բուրդ» էթնոնիմները⁴: Այսպիսով, մեր ուսումնասիրության շրջանակն ընդգրկող ժամանակաշրջանի հեղինակների համար երկու եզրերն էլ հավասարապես ընդունելի են եղել, ինչում կհամոզվենք տեղական սկզբնաղբյուրներից հետագա մեջբերումներում:

16-րդ դարի սկզբին քրդական ցեղերը շարունակում են իրենց տեղաշարժերը Վանա լճի ավազանի հյուսիս: Դեպքերին ժամանակակից Բարսեղ Արճիշեցին նշում է, որ 1501 թ. Բաղեշի քրդերը գրավեցին Արծկեն և այրեցին ու ավերեցին Նորաշեն տները⁵: 1502 թ. հայ բնակչությունը Նույնիսկ ստիպված է եղել Արճեշից փախուստի դիմել: Հաջորդ տարի Սևանի (Արճակ լճից հարավ-արևելք) քրդերը թալանել են Արճեշը և 1210 բեռ հաց տարել, ապա պատասխան գործողություններով ներխուժել են Ղզլբաշները՝ հարձակվելով Արծկե քաղաքի վրա, որտեղից «ազգն Մարաց» հեռացել է, բայց որոշ ժամանակ անց «ազգն քրդաց» վերստին գրավել է բերդը⁶: Սեֆյանները քիչ անց ևս մեկ անգամ անցել են պատասխան գործողությունների, Արճեշի հայերից ծանր հարկեր են հավաքել, «յելանելն բազում կին և հարսն գերի վերուցին», այնուհետև Մանծկերտի (Բուլանուխ) գավառում 7 ղլախ քրդերի (700 հոգի) սրի են քաշել, շարունակել են Արճեշում հայերից բռնի հարկեր հավաքել, ինչպես նաև 400 հայ պատանիների են գերել և 1000 տավար տարել⁷: 1504 թ. Տարոնի դաշտում գտնվող քրդական և թուրքական 500 ձիավոր ներխուժել են Քաջբերունիք՝ տանելով Արճեշի ու գյուղերի բոլոր անասունները⁸: Նույն 1504 թ.

¹ Նույն տեղում, էջ 145-151:

² Թուրքական աղբյուրներ, հ. 9, էջ 202:

³ Դալայյան Ս., Հայ իշխանական տների հետքերը Հարավարևմտյան Հայաստանում, էջ 188-189:

⁴ Տե՛ս Մարգարյան Հ., Չաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, ՊԲՀ, 1992, թ. 2-3, էջ 146-149:

⁵ Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, էջ 130:

⁶ Նույն տեղում, էջ 127:

⁷ Նույն տեղում, էջ 127-128:

⁸ Նույն տեղում, էջ 128:

«ազգն մարաց» ավերածություններ է արել Վանում, Աղթամարում և Արծկեում¹: Փաստորեն, Սեֆյանների կողմից Հայաստանի նվաճման ժամանակ Վանա լճի ավազանի քրդական ցեղերը համառ դիմադրություն են ցույց տվել, և դրանից մեծապես տուժել է տեղի հայ բնակչությունը:

Սուննի քրդերի և շիա Սեֆյանների միջև ռազմական բախումը բնական հիմքեր ստեղծեց թուրք-քրդական համագործակցության սկզբնավորման համար: Չալդրանի ճակատամարտում (1514 թ.) թուրք ցեղապետերի մի մասը օսմանյան բանակի կողմից էր, մի մասն էլ (ազդեցիկ 25 առաջնորդներ, օրինակ՝ Մայաֆարկինի, Հիսն Քայֆի (Հասան Քեյֆ)², Ագիլի (Անգո), Սասունի, Բալուի բեյերը) նրանց կողմը հակվեց ճակատամարտից հետո³: Սելիմ Ահեդի՝ Չալդրանի ուղղությամբ շարժվելիս Դիարբեքիի քրդերը ասպատակել են Կամախի, Դերջանի, Բաբերդի բերդերի միջև ընկած տարածքները՝ վնաս պատճառելով օսմանյան զորքերին: Սելիմը և Դիարբեքիի իշխողը նամակագրական կապի մեջ են մտել, և վերջինս նշել է իր 200 հազար հրացանաձիգների մասին: Ի վերջո, Սեֆյաններին պարտության մատնելուց հետո սուլթանի 100 հազարանոց բանակը՝ վեզիր Բըրքլի Մուհամմեդ փաշայի ղեկավարությամբ, պաշարել է Դիարբեքիը: Քրդերը մոլլա Իդրիս Իմատիի միջամտությամբ բերդը զիջել են վեզիրին և գնացել Մարդին, իսկ Իդրիսը սուլթանի կողմից ընդմիջտ ստացել է Դիարբեքիը⁴: 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի թուրք պետական գործիչ և պատմագիր Մեհմեդ Քյամիլ փաշան իր «Օսմանյան պետության քաղաքական պատմությունը» աշխատության մեջ գրում է 1514-1515 թթ. մոլլա Իդրիսի գործունեության և քրդական դերբեյությունների հիմնադրման մասին: Նա նշում է, որ Իդրիսի շնորհիվ Իմայիլի դեմ ապստամբական օջախներ են դարձել Դիարբեքիը, Բիթլիսը, Հիսնի-Քեֆը, ինչպես նաև Սղերդի, Զիրբուբի և հարակից շրջանների 9 ցեղերի առաջնորդներ ընդունել են օսմանյան հպատակությունը, ապա նրանց են միացել հարևան ևս 16 բեյեր, որոնց օժանդակությամբ օսմանյան բանակը գրավել է Մուշը, Մարդինը, Էրզանը, Սինջարը, Ուրֆան, Ջերմուկը, Բերեջիկը և Դիարբեքիի հարավային շրջանները⁵: Ըստ Ն. Ադոնցի՝ Իդրիսի ջանքերով քրդերը Արևմտյան Հայաստանի խորքեր էին տեղափոխվում երեք ուղղություններով՝ Դիարբեքիից, Մոսուլից Հաբարիով, Իրանից Սոուջբուլաղի շրջակայքից: Իդրիսը Նույնիսկ համոզեց

¹ Ժամանակագրություն (XI-XVIII դդ.), տպագր. պատրաստեց՝ Ն. Պողարյան, «Բանբեր Մատենադարանի», թ. 9, Երևան, 1969, էջ 273:

² Ի դեպ, Հիսն Քայֆի շրջանում քրդական տարրի առկայության մասին խոսում են դեռևս միջնադարյան արաբական սկզբնաղբյուրները: Քրդական հումայդա ցեղից էին ծագում Մրվանյանները, որոնք 10-րդ դարում Համդանյան ցեղի արաբներից գրավեցին Դիարբեքիը, Մայաֆարկինը, Հիսն Քեյֆը, կարճ ժամանակով՝ Նույնիսկ Մանազկերտը, Խլաթը, Արճեշև ու Վանը՝ իրենց կենտրոնը դարձնելով Ապահուկիքը (տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Յ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 156-157, 261):

³ Չուլբաղարի տիրակալը հրաժարվեց օսմանցիների հետ դաշնակցել, ինչի հետևանքով օսմանյան բանակը գրավեց և հարթուկիս բռնագրավեց նրա տիրույթները (տե՛ս Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը, էջ 72-73):

⁴ Էվլիյա Չելեբին Դիարբեքիի հիմնադրման մասին մի մտացածին իսլամական ավանդագրույց է պատմում, որտեղ պատմական անցքերին առնչվող երկու դրվագ կա՝ մինչև մուսուլման իշխողների մուտքը Դիարբեքիում ոչ մուսուլման բնակչություն էր, և մուսուլման տարրի հոսքը Մոսուլի կողմերի հետ է կապվում (տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. 9, էջ 179-181):

⁵ Տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. 7, թարգմ.՝ Ա. Սաֆրաստյանի և Գ. Սանթուրջյանի, Երևան, 1972, էջ 79:

հրանից մոտ 20 ցեղապետերի գաղթել Դիարբեքիի շրջան¹: Եվլիյա Չելեբին իր ուղեգրությունների տարբեր հատվածներում քրդերին անդրադառնալիս գրում է օսմանյան իշխանությունների կողմից նրանց հնազանդեցման մասին: Այսպես, 1514 թ. Բիթլիսի խանը հպատակվել է Սելիմ Ահեդին, և «հյուբյունմեթի կարգով նրա որդիները մինչև հիմա էլ իշխում են իբրև խան, որոնց փաղիշահական հրամաններում վեհաշուք խան տիտղոսն է տրվում»²: Եվլիյա Չելեբին, շարունակաբար իսլամական գույներով ներկայացնելով հայկական բնակավայրերի պատմությունը, Բիթլիսի մասին խոսելիս առաջին մահմեդական տիրակալին նշելուց առաջ ասում է՝ «առաջին անգամ այս վայրը քրիստոնյաներից գրավել է»՝ դրանով իսկ ընդունելով մինչ այդ քրիստոնեական իշխանության գոյության փաստը³: 1514 թ. Սելիմ Ահեդի վեզիր Բըլըբլի Մուհամեդ փաշան Չալդրանի ճակատամարտից վերադառնալիս Դիարբեքիի հետ գրավում է նաև Միաֆարկինը⁴: 1515 թ. Սղերդի խանը Մուլլա Իդրիսի համաձայնությամբ և սուլթանին հպատակություն է հայտնել⁵: Նույն տարում սուլթանին հպատակվել են Բալուն (հյուբյունմեթ), Ճապաղջուրը, որ, ըստ Եվլիյա Չելեբիի, քրդական 9 օջաբլըքներից էր, Գենջը⁶: 1516 թ. Մուլլա Իդրիսի և Բըլըբլի Մուհամեդ փաշայի ձեռքով Սաքմանը ևս հպատակվել է Սելիմ Ահեդին⁷: 1515 թ. սկսած՝ Իդրիսի կողմից խրախուսվել է քրդական ցեղերի հոսքը Էրզրումի նահանգի հարավային շրջաններ⁸: Եվլիյա Չելեբին 17-րդ դարի կեսերին Դիարբեքիի էյալեթում մատնանշում է 5 հյուբյունմեթ (Էլ-Ջեզիրե, Էկիլ (Անզո), Գինճ, Բալու, Խրու), 19 սանջակ, որոնցից «8-ը քրդական բեյերի տիրապետության ներքո էին գտնվում, որովհետև (սուլթան) Սելիմ խանը [այդ երկրները] նվաճելու ժամանակ նրանց (քուրդ բեյերին) յուրթուրք և օջաբլըք է շնորհել»՝ Սաքման, Կուլեբ, Միհրանի, Թերջիլ, Աթաբ,

¹ Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը, էջ 76:

² Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 196:

³ Նույն տեղում:

⁴ Եվլիյա Չելեբին հաղորդում է մի լեգենդ, ըստ որի՝ քրդերի նախնին Միաֆարկինում հաստատվել է՝ հավանելով տեղի ջուրն ու օղը (տե՛ս Նույն տեղում, էջ 191-192): Սա նշանակում է, որ միայն ռազմաբարդաբանական գործընթացներով դժվար է բացատրել քրդական տեղաշարժերի պատճառները, բանի որ այդտեղ կարևոր դեր են խաղացել նաև բնակլիմայական փոփոխությունները: Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Միջագետքում 14-16-րդ դարերում տեղումները նորմալից ցածր են եղել (տե՛ս Cook Ed. et al., Old World megadroughts and pluvials during the Common Era, Science Adv., Nov. 6, 2015; 1:e1500561, էջ 2-3), ուստի այս շարունակական միտումն իսկապես կարող էր հանգեցնել ջրային ռեսուրսների պատճառով միգրացիոն ալիքի առաջացմանը դեպի ավելի ջրառատ տարածաշրջան: Դիարբեքիի նահանգը, որ ընդգրկել է ոչ միայն Հարավային Հայաստանի հողերը, այլև Հյուսիսային Միջագետքի մի մասը, ի տարբերություն մերօրյա իրավիճակին, 16-17-րդ դարերում բավականին նպաստավոր բնակլիմայական պայմաններ ուներ: Այս մասին է վկայում Քյաթիբ Չելեբին, որի տեղեկությունների համաձայն՝ Նիսիբիսի (Մծբինի) մոտ մերձափնյա շուրջ 40 հազար բանջարանոց կար, Սղերդում առատ էին թուզը, նուռը և խաղողը, և «բոլոր ծառերն այստեղ աճում են անձրևի ջրով» (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, հ. Բ, Երևան, 1964, էջ 54-56): Ներկայիս խիստ չորային տաք սեզոնի պայմաններում (հուլիս-օգոստոս ամիսներին 11-12 մմ տեղումներ) դժվար է նույնը պատկերացնել:

⁵ Տոհմի ընդհատման պատճառով Եվլիյա Չելեբիի ժամանակ Սղերդն արդեն Դիարբեքիի էյալեթի սանջակի էր վերածվել (տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 264):

⁶ Նույն տեղում, էջ 164, 167: Յորթուրքը, օջաբլըքը և հյուբյունմեթը Օսմանյան կայսրությունում ժառանգական հողատիրության ձևեր էին: Հյուբյունմեթի տներն ու բերքերը իշխողներին էր պատկանում, իսկ օջաբլըքում՝ պետությանը (տե՛ս Նույն տեղում, էջ 318-320, ծան. 77):

⁷ Նույն տեղում, էջ 163:

⁸ Տե՛ս Троттер, Мало-азийские курды, «Известия Кавказского отдела императорского Русского географического общества», т. VII, Тифлис, 1882-1883, էջ 1-3:

Փերթեթ, Ճապաղջուր, Ջերմուկ, իսկ Յիսնի-Քեյֆը, Մայաֆարկինը և Սինջարը լոկ օսմանյան սանջակներ էին¹:

1515 թ. պայմանագրով Արևմտյան Յայաստանը և Յյուսիսային Միջագետքը Սեֆյաններից անցան օսմանյան տիրապետության տակ: Ըստ Յ. Փափագյանի՝ պետական սահմանների նման փոփոխությունը հանգեցրել է Արևմտյան Յայաստանում բնակչության տեղաշարժերի, մասնավորապես քրդական տարրն աստիճանաբար շարժվել է դեպի Յայաստանի կենտրոնական նահանգներ²: Թեև նա կարծում է, թե քրդերն այդտեղ սկսել են կայուն բնակություն հաստատել, սակայն հայ հեղինակների, եվրոպացի և անգամ թուրք ուղեգիրների տվյալները ցույց են տալիս, որ նրանք այդտեղ դեռևս մշտաբնակ չեն եղել: Բաղեշի Ռոժակի մեծ ցեղից Մուլլա Իդրիսի միջոցով դավանակից քրդերին թուրք-պարսկական սահմանային գոտում որպես պատնեշ օգտագործելու քաղաքականության իրագործման ընթացքը նկարագրված է Շարաֆ խան Բիթլիսիի կողմից. «...բազմաթիվ աշիրաթներ Սուլեյմանի քրդերից, որոնք բնակվում էին Միաֆարդինի կողմերում, գնացին բնակություն հաստատելու ղզլբաշներից գրավված վայրերում, միաժամանակ հանձն առնելով պաշտպանել սահմանները: Այդ աշիրաթների պարագլուխները կարևոր պաշտոններ՝ զիամթներ, ալայթեկիներ և սանջաթներ ստացան»³: Շարաֆ խանը հատկապես կարևորում է Փեսյան ցեղի առաջնորդ Շահսուվար բեկին, որին վստահված էր Բայազետի բերդի պաշտպանությունը⁴: Արարատյան կուսակալության վարչամիավորներում քրդական ցեղերի մասին քուրդ հեղինակն ընդհանրապես չի խոսում: Իսբանդար Մուևշիի հաղորդմամբ՝ Իսմայիլն էլ, իր հերթին, իրեն հավատարիմ Մահմուդի և Փագուկի քրդերին տիրույթներ էր տվել Ալաշկերտի՝ դեռևս իր տիրապետության ներքո գտնվող արևելյան մասում և Մակուի մերձակայքում⁵:

14-16-րդ դարերի միգրացիոն տեղաշարժերի հետևանքով 16-րդ դարի 1-ին կեսին Վանի նահանգում բնակվում էին Նեմիրան (Խիզանում), Մահմուդի (Խոշաբում), Դումբուկի (Սաբանում), Փագուկի (Արճեշում և Ադիլջևազում), Ռուզակի (Բիթլիսում) ցեղերը: «Շարաֆ-նամե»-ում հիշատակվում են նաև Յաթթարի, Բելիլան, Բիլբասի, Կավալիսի, Քեսյանի, Շեկակի և այլ ցեղեր, որոնք բնակվում էին Յայաստանի հարավային շրջաններում: Ամենաազդեցիկը Բիթլիսի (Բաղեշի) ամիրաներն էին, որոնք, ըստ ձեռագրերի հիշատակարաններում առկա տեղեկությունների, իշխում էին Բիթլի-

¹ Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 25: 16-րդ դարի վերջին քառորդի դրությամբ Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանման ցուցակում, որ ներկայացնում է 16-րդ դարի թուրք պետական գործիչ և պատմագիր Ֆերիդուն բեյը, արտացոլվում է քրդական ցեղերի հողատիրությունը Արևմտյան Յայաստանում: Յատկանշական է, որ հիշատակվող օջաքլքների մոտ 80%-ը կապված էր քրդական ցեղերի հետ: Դիարբեքիրի էյալեթի 22 լիվաների շարքում Ջերմեքը, Մարկերտը, Կալեքը, Էբակը, Միհրանին, Զորթիշը, Ահաբեսը, Մայաֆարկինը և Զուրդթանը օջաքլքներ էին, իսկ Ջետր, Յետր, Էբուր, Բերիել, Բալու և Գինճ օջաքլքները՝ հյուբյումթներ, Վանի էյալեթի լիվաների շարքում՝ Վերֆայի, Մոկսի, Շենավի և Կուրկուրի օջաքլքները, ինչպես նաև Բիթլիսի, Յարանի և Յեթթարի յորթլուք օջաքլքներն ու Մահմուդի հյուբյումթը (տես Թուրքական աղբյուրներ, հ. Բ, էջ 218-221):

² Տե՛ս Փափագյան Յ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (Ժ2 դ.), էջ 24:

³ Scheref-nameh ou Histoire des Kourdes, par Scheref, prince de Bidlis, pubijee par V. Veliaminof-Zernof, SPB, 1860, t. 1, pp. 269-270, հղումն ըստ՝ Փափագյան Յ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (Ժ2 դ.), էջ 24:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Փափագյան Յ., Երևանի Մուհամադ-խան Ղաջարի՝ Միրզա-աղա Սիպկիին և Ամադ-աղա Չիլանկիին շնորհած աղայության հրամանագրերը (XVIII դ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 13, Երևան, 1985, էջ 275:

սում, հլաթում, Մուշում, Խնուսում, Բասենում և Ավնիկում: Վանա լճի հարավային շրջանները Խիզանի քուրդ ամիրաների իշխանության ներքո էին: Ազդեցիկ էին նաև Ոստանի Շամբո ցեղի ամիրաները¹: 1540-ական թթ. դեպքերի մասին խոսելիս Էվլիյա Չելեբին Կոթուրի ձորից արևմուտք՝ մինչև Վան, հիշատակում է Փինյանիչի քրդերին²: Մ. Չուլայանը կարծում է, որ 16-17-րդ դարերում Արևմտյան Հայաստանում քոչվոր և կիսաքոչվոր ցեղերին (հիմնականում՝ քրդական և թուրքմենական) ավելացնելով՝ օտար տիրապետությունը ձգտում էր մասնատել և թուլացնել տեղական նստակյաց բնակչությանը³, քանի որ նրանց սովորացման պայմաններում նստակյաց բնակչության համար ռեսուրսների հասանելիությունը սահմանափակվում էր: Լեոն, Վ. Մինորսկին և Վ. Բայբուրդյանը նշում են, որ օսմանյան քաղաքականությունը ձգտում էր ապահովել քուրդ ցեղապետերի տիրապետող դիրքը Արևմտյան Հայաստանում, ընդ որում՝ հայերի զանգվածային արտագաղթը և քրդական տարրի շարունակական ներթափանցումը հանգեցրին նրան, որ արդեն 18-րդ դարում գրեթե բոլոր վարչամիավորներում հայերի կողքին զգալի էր նաև քրդերի թիվը⁴: Նրանց բնակության օջախներն էին Դիարբեքիրի և Վանի նահանգները, մասամբ՝ Պարսկահայքը և Երզրումի նահանգի հարավը:

Քրդական ցեղային իշխանությունների իրավունքների սահմանափակման փորձերը խիստ բացասաբար էին ընկալվում նրանց կողմից, և նման մի առիթի պարագայում 1533 թ. Բիթլիսի քուրդ Էմիր Շարաֆ խանն ապստամբություն բարձրացրեց՝ աջակցություն ստանալով Սեֆյանների կողմից⁵: Թուրք-պարսկական պատերազմական թոհուրոհի մեջ, ի վերջո, օսմանյան սուլթան Սուլեյման Ա-ին հաջողվեց վերստին հպատակեցնել քրդական ցեղերին: Այսպես, 1548 թ. հպատակվել է Մահմուդի քրդերի բեյը՝ յուրթլուքի և օջաքլըքի կարգով, և մասնակցել Թավրիզի, Նախիջևանի ու Երևանի ուղղությամբ արշավանքներին⁶: 1549 թ. Ամյուկը, Ոստանը և այլ տարածքներ դարձել են Մահմուդի քուրդ բեյի հյուբյուրմեթը, այնուհետև հպատակվել և իրենց իրավունքներում վերահաստատվել են Բերկրի, ինչպես նաև Վանի նահանգից հարավ ընկած մի քանի բերդերի քուրդ իշխողները⁷: 1549 թ. քուրդ բոլոր բեյերը հպատակվել են Սուլեյմանին⁸: Այդուհանդերձ, Սուլեյման Ա-ն նախկինի չափ չէր վստահում քրդական ցեղապետերին և Արճեշի բերդի պահպանության համար մարդկանց էր բերել Բոսնիայից և Ալբանիայից, ովքեր մի քանի սերունդներ շարունակ կատարել են իրենց վստահված գործը, իսկ «անծանոթ քրդերին», ըստ Էվլիյա Չելեբիի, ներս չէին թողնում⁹:

¹ Տե՛ս Зулалян М., Армения в первой половине XVI в., Москва, 1971, էջ 25-26:

² Տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 230:

³ Տե՛ս Չուլայան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980, էջ 210-212: Վանի նահանգի քրդական ցեղախմբերի մասին տե՛ս նաև Բաղայան Գ., Վանի էյալեթի քրդական իշխանությունները (հուլյանները) 14-րդ դ. - 19-րդ դ. 40-ական թթ., «Իրան-Նամե», 1998, թ. 2-3, էջ 23-37:

⁴ Տե՛ս Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը, էջ 77, 80-82:

⁵ Տե՛ս Չուլայան Մ., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գ. Ա, Երևան, 1990, էջ 114:

⁶ Տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 224:

⁷ Տե՛ս Նույն տեղում, էջ 229:

⁸ Նույն տեղում, էջ 214:

⁹ Նույն տեղում, էջ 222:

16-րդ դարի թուրք-պարսկական պատերազմների կապակցությամբ սկզբնաղբյուրներում քրդական ցեղերը քանիցս հիշատակվում են արդեն նաև Պարսկահայքում: 17-րդ դարի թուրք պատմագիր Սուլաբ Չադեն 1549-1550 թթ. հիշատակում է խոյի խան Նշանակված Դենբելի Յաջի բեյին, ինչպես և Արճեշի և Ադիլջևազի բուրդ բեյերին¹: Հատկանշական է, որ թուրք-պարսկական սահմանի երկու կողմերում հաստատված քրդական ցեղերը ռետուրսների ձեռքբերման համար միմյանց դեմ հաճախ պայքար էին մղում: 1577 թ. Վանի նահանգի արևելքում բնակվող քրդական ցեղերն ասպատակության ենթարկեցին խոյի, Սալմաստի և Ուրմիո շրջանները²:

Քրդական ցեղերի տեղաշարժի հաջորդ ալիքն ուղղվեց դեպի Երզրումի նահանգ: Սկզբնաղբյուրներում քանիցս հիշատակվում է 1590-1592 թթ. քրդական տեղաշարժը Երզնկա՝ «ջալալի» Գզիրոլու ղեկավարությամբ³: Մեզ են հասել 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին քրդական ավագակախմբերի կողմից նահանգի տարբեր շրջաններում, օրինակ՝ Կամախում, քարավանների թալանի մասին հիշատակություններ⁴: 1590-1595 թթ. Կեդիին անդրադառնալիս Հակոբ Կարնեցին նշում է. «Չի այն ժամանակ յոյժ շէն եղեալ է Կեդի, բովանդակ հայք և անուանիք և դասատուն վարդապետաց»⁵: Հաջորդող տարիների համար ժամանակագիրը շարունակում է. «...ազգն քրդաց ապրստամբ և ջալալի բազում են եղեալ, որ գլխմեանց գերկիրն ասպատակեն, և թալանեն և գողանան եղեր հանապազ և յանցս ճանապարհաց և ի լերինս բազումք որսան և ըսպանեն, որ դեռևս սովորութիւնս նոցա այն է, որ մինչև Բ (2) և Գ (3) անգամ գերկիրն Կեդու և Բալվա թալաներ և աւիրեալ են, զի դեռ ևս Օսմանցիք ոչ են եղեալ այսչափ հզօր զօրութեամբ և նուաճեալ զամենայն աշխարհ, զի անտիրացեալ է ի թագաւորաց: Վասն որոյ տարի վերայ տարւոյ աւերումն է սկսեալ և սղութիւն հացի»⁶: Հակոբ Կարնեցու պապը՝ Միրաբը, Ամիդ գնալու ճանապարհին հենց նմանատիպ հարձակման հետևանքով իր ուղեկիցների հետ թալանվել և սպանվել է⁷: Փաստորեն, Հակոբ Կարնեցու հաղորդած տեղեկությունները խոսում են օսմանյան կենտրոնական իշխանության թուլացման մասին: Ի դեպ, նա իր ժամանակակից հեղինակների պես համարժեք իմաստներով օգտագործում է «բուրդք» և «մարք» եզրերը⁸:

Այսպիսով, 16-րդ դարում քրդական ցեղախմբերի հողատիրության ընդլայնումն Արևմտյան Հայաստանում և Պարսկահայքում դարձավ օտար Էթնիկական տարրի ամրապնդման առաջին փուլերից մեկը, թեև այդ ժամանակ նորահաստատ, ինչպես և 14-րդ դարի կեսերից վերաբնակված ցեղերը դեռևս մեծամասնությունը չէին կազմում այդ հողերում, որի նստակյաց երկրագործ հասարակության արտադրած

¹ Նույնը, հ. Բ, էջ 143, 144:

² Փափագյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺՁ դ.), էջ 30: Սալմաստում Առաքել Դավրիժեցին դարավերջին հիշատակում է բուրդ Դագի խանին (Առաքել Դավրիժեցի, գլ. Գ, էջ 18-19):

³ Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 269, 394: Սամուել Անեցի և շարունակողներ, ժամանակագրութիւն, աշխ.՝ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 322: Առաքել Դավրիժեցի, գլ. ԾՁ, էջ 632:

⁴ Տե՛ս Փափագյան Վ., Առևտրական ճանապարհների պաշտպանությունը Սեֆյան պետությունում XVII դարում, ՊԲՀ, 1986, թ. 4, էջ 158:

⁵ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 246:

⁶ Նույն տեղում, էջ 246-247:

⁷ Նույն տեղում, էջ 247:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 246-247:

սննդամթերքի շնորհիվ կարողանում էին ապահովել իրենց սեզոնային-անասնապահական ապրելակերպը:

Микаэл Малхасян, Переселения чужеземцев в Армению в XVI веке, - В XVI в. Армения была полем постоянных войн между Османской империей и Сефевидской Персией. Эти войны привели к неким изменениям тенденций и особенностей этнодемографических процессов в Армении. Османская политика переселения курдов в 1515-1516 гг. стала важнейшей особенностью этих изменений. Используя силы суннитских курдов, Османская империя старалась иметь защищенную границу с шиитскими Сефевидами. Несмотря на то, что некоторые курдские племена расселились в южных регионах Армении еще в XIV в., масштабное переселение в XVI в. привело к формированию чужой системы землевладения в некоторых регионах провинций Диярбакыр и Ван, где армянское население продолжало быть подавляющим большинством.

Mikayel Malkhasyan, Foreign Ethnic Invasions into Armenia in the 16th Century, - Armenia was a battlefield between the Ottoman Empire and Safavid Persia in the 16th century. The wars between these countries led to some changes in the trends and features of the ethno-demographic processes in Armenia. The essential feature of these changes became the Kurdish resettlement policy by the Ottoman authorities starting from 1515-1516. Using Sunni Kurdish military forces the Ottoman Empire tried to have protected borders with Shia Safavids. Although some Kurdish tribes had already settled in the southern regions of Armenia starting from the 14th century, the massive resettlement in the 16th century led to the formation of their landowning system in some regions of Diyarbakir and Van provinces where the Armenian population was still the overwhelming majority.

Միքայել Մալխասյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ:

